




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



«ԸՆՏԱՆԻԶ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ
ՍՏԵՂՃԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԴՈԱԿ



ԿՈԼՈՐԻՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԻ ԳՈՒՆԱՊԱՏԿԵՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳԻՐ	3-6
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	7-8
ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳՅՈՒՄՐԵՑԻ ԱՐՎԵՍԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ ԱՐՅԵՍԱԿՈՐՆԵՐԻ ՀԵՏ	9
ՍԵՄԻՆԱՐՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՅԵՍԻ, ԱՐՎԵՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	10-11
ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՄՐՈՒ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ	12
ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ	13-14
ԱԶԳԱՅԻՆ ԱՐՅԵՍԻ ԵՎ ԱՐՎԵՍԻ ՃՅՈՒՂԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲԱՑ ԴԱՍԵՐ	15-16
ՊԱՏՄԱԿԱՆ ԿՈԹՈՂՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	17
«ԱՐՅԵՍԻ ԵՎ ԱՐՎԵՍԻ ՔԱՂԱՔ ԳՅՈՒՄՐԻ» ԳՅՈՒՄՐՈՒ ՕՐԿԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	18-21
ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ	22-23
ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ	24
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	25-26
ՏԵՍԱԴԱՐԱՆ	27

Հաստատում եմ
Տնօրեն *Ա. Մինասյան*
« 17 » _____ 2021թ.



Ծրագիր

«Կոլորիտային քաղաքի գունապատկերը» միջոցառումների շարքի

Միջոցառման իրականացման վայրը՝ «Ընտանիք» կենտրոն, Ալյամազյան քույրերի պատկերասրահ, Գյումրու ժողովրդական ճարտարապետության, քաղաքային կենցաղի և ազգային ճարտարապետության թանգարան, մշակութային և տեղեկատվական կենտրոններ, Մինաս Ավետիսյանի տուն-թանգարան, Իտալիայի հյուպատոսարանի՝ Գյումրու կերամիկայի արհեստանոց, Գյումրու տեխնոլոգիական կենտրոն, Սուրբ Հակոբ Մծբնեցի եկեղեցի, Խաչքարերի պուրակ, Սուրբ Նշան եկեղեցի:

Միջոցառման սկիզբը՝ մայիս, 2021թ.

Միջոցառման ավարտը՝ սեպտեմբեր, 2021թ.

Միջոցառման համառոտ նկարագրությունը

1-ին փուլ՝ Շիրակի մարզի համայնքներից և Գյումրու տարբեր հանրակրթական դպրոցներից «Ընտանիք» կենտրոն հաճախող, մասնագիտական կարողություններ և հմտություններ ունեցող դեռահասներն իրենց դասընկերների և արցախիցի՝ «Հետաքրքրասերներ»-ի համար կենտրոնում կկազմակերպեն բաց դասեր, տեսական գիտելիքների և գործնական աշխատանքների ցուցադրումով կներկայացնեն ազգային արհեստի և արվեստի ճյուղերը: Ազգային արհեստով ու արվեստով, տեղեկատվական, ռոբոտաշինության և ռադիոէլեկտրոնիկայի ոլորտներին հաղորդ դառնալու ցանկություն ունեցող «Հետաքրքրասերներ»-ի խմբերի համար կկազմակերպվեն Գյումրու հայտնի վարպետների ու արվեստագետների հետ հանդիպումներ, այցելություն Գյումրու թանգարաններ, մշակութային և տեխնոլոգիական կենտրոններ, սեմինարներ՝ ժողովրդական արհեստների, արվեստի, էկոլոգիայի, առողջ ապրելակերպի վերաբերյալ:

2-րդ փուլ՝ «Հետաքրքրասերներ»-ի խմբերը կենտրոնի սաների օգնությամբ համատեղ կպատրաստեն Գյումրու կոլորիտին բնորոշ դեկորատիվ և կիրառական աշխատանքներ: Կկազմակերպեն սպորտային մրցույթներ, քաղաքի պատմամշակութային կոթողների՝ Սուրբ Հակոբ Մծբնեցի եկեղեցու և Խաչքարերի պուրակի մաքրման աշխատանքներ:

3-րդ փուլ՝ «Հետաքրքրասերներ»-ի խմբերը և կենտրոնի սաները համատեղ կատարած աշխատանքները հանրայնացնելու, «Արհեստի և արվեստի քաղաք Գյումրի» կարգախոսը վերահաստատելու միտումով կմասնակցեն Գյումրու օրվան նվիրված քաղաքային միջոցառմանը՝ կիրառական արվեստի, հին արհեստների, ռադիոէլեկտրոնիկայի և ռոբոտաշինության ոլորտների ցուցադրումներով, ֆլեշմոբերով, զուգահեռ գեղարվեստական, մարտական, վարսավիրական արվեստների և հագուստի մոդելավորման խմբակների ցուցադրական ելույթներով: Բնակչության համար կկազմակերպվի շախմատային խաղի միաժամանակյա սեանսներ, համակարգչային խմբակների սաները կցուցադրեն «Հին և նոր Գյումրի» խորագրով սահիկահանդեսներ, թատերական խմբակների սաները հանդես կգան բեմականացումներով:

Միջոցառումների նպատակն է՝ նպաստել Գյումրու մշակութային կյանքի վերածնունդին, կարևորել արտադպրոցական կրթությամբ զբաղվելու անհրաժեշտությունն արհեստների ու արվեստների տարածման, պահպանման գործում: Կենտրոնի խմբերը համալրել «Հետաքրքրասերներ»-ի խմբերի բացահայտված շնորհալի դեռահասներով:

Խնդիրներն են՝ դեռահասներին սովորեցնել և նրանց մոտ զարգացնել մասնագիտական կարողություններ ու հմտություններ, ստեղծագործական աշխատանքների միջոցով ներկայացնել Գյումրվա ինքնատիպ կոլորիտը, մասնակիցներին ուղղորդել և աջակցել մասնագիտական կողմնորոշման հարցում, բարձրացնել հետաքրքրությունը Գյումրուն բնորոշ արհեստի ու արվեստի ճյուղերի նկատմամբ և հանրայնացել, դեռահասների շրջանում ճանաչելի դարձնել Գյումրվա վարպետներին, պատմամշակութային արժեքների և առհասարակ միջավայրի մաքրության, էկոլոգիայի պահպանումը դարձնել ամենօրյա գործելակերպ: Միջոցառումները կանցկացվեն ք. Գյումրիում մայիս-սեպտեմբեր ամսին:

Միջոցառման նկարագրությունը

- **Միջոցառման հիմնավորումը՝ միջոցառման իրականացման անհրաժեշտությունը:**
Միջոցառումների շնորհիվ «Ընտանիք» կենտրոնի սաները հնարավորություն կստանան հանրայնացնելու արտադպրոցական կրթությամբ ստացած մասնագիտական գիտելիքները, կարողությունները և հմտությունները, հասակակիցների համար կդառնան վառ օրինակ՝ ուղղորդելու մասնագիտական կրթության մեջ և մասնակից դարձնելու արտադպրոցական կրթության գործընթացին: «Հետաքրքրասերներ»-ի խմբերի դեռահասների մեջ կարթնանա նաև ազգային մշակույթը, արհեստներն ու արվեստները պահպանելու, տարածելու պատրաստակամություն: Գյումրու կոլորիտն արտահայտող աշխատանքները կդառնան նաև զբոսաշրջիկների համար այցեքարտ՝ տուրիզմը զարգացնելու և հայկական մշակույթը տարածելու գործում:
- **Միջոցառման նպատակները և խնդիրները.**
Կարևորել արտադպրոցական կրթության դերը, ամրապնդել սաների յուրացրած տեսական գիտելիքները, գործնական կարողություններն ու հմտությունները, ուղղորդել և աջակցել համայնքների դեռահասներին մասնագիտական կողմնորոշման հարցում: Զարգացնել սաների ստեղծագործական միտքը, բարձրացնել հետաքրքրությունը արհեստի ու արվեստի ճյուղերի նկատմամբ և նպաստել դրանց հանրայնացմանը: Ձևավորել էկոմշակույթ և սրտացավ վերաբերմունք սեփական քաղաքի նկատմամբ, ներգրավել սաներին հանրօգուտ, կազմակերպչական և նախաձեռնողական աշխատանքներում: Միջոցառումներին մասնակից դարձնել արցախցի դեռահասներին:

Միջոցառման կառուցվածքը

- **Միջոցառման իրականացման համար նախատեսված աշխատանքները՝ նախապատրաստումը, իրականացումը և արդյունքների ամփոփումը:**
Նախապատրաստում՝ ծրագրի համար անհրաժեշտ նյութերի ու պարագաների, համագործակցող կազմակերպությունների հետ պայմանավորվածության, տրանսպորտային և նկարահանման ծառայությունների ձեռքբերում, Գյումրու կոլորիտն արտահայտող էքզիզների պատրաստում:

Իրականացում՝

1-ին փուլ՝

- ✓ ազգային արհեստների և արվեստի, տեղեկատվական ոլորտների վերաբերյալ բաց դասեր, տեսական գիտելիքների և գործնական աշխատանքների ցուցադրում «Հետաքրքրասերներ»-ի համար «Ընտանիք» կենտրոնում,
- ✓ հանդիպումներ Գյումրի քաղաքի հայտնի վարպետների ու արվեստագետների հետ,
- ✓ սեմինարներ՝ ժողովրդական արվեստի, արհեստների, էկոլոգիայի, ավանդական սպորտային խաղերի վերաբերյալ,
- ✓ այցելություն Ասլամազյան քույրերի պատկերասրահ, Մինաս Ավետիսյանի տուն-թանգարան, ժողովրդական ճարտարապետության, քաղաքային կենցաղի և ազգային ճարտարապետության թանգարան, Իտալիայի հյուպատոսարանի՝ Գյումրու կերամիակայի արհեստանոց, տեխնոլոգիական կենտրոններ:

2-րդ փուլ՝

- ✓ «Հետաքրքրասերներ»-ի խմբերի և կենտրոնի սաների կողմից Գյումրու կոլորիտին բնորոշ աշխատանքների համատեղ պատրաստում «Ընտանիք» կենտրոնում,
- ✓ Գյումրի քաղաքի պատմամշակութային կոթողների մաքրման աշխատանքներ՝ Սուրբ Հակոբ Մծբնեցի եկեղեցի, Խաչքարերի պուրակ, հարցախույզ թերթիկների լրացում,
- ✓ սպորտային մրցույթներ:

3-րդ փուլ՝

- ✓ մասնակցություն Գյումրու օրվան նվիրված քաղաքային միջոցառմանը /աշխատանքների ցուցադրություն, գեղարվեստական և ցուցադրական ելույթներ, ֆլեշմոբեր, շախմատային սեանսներ/, հարցախույզ թերթիկների լրացում:

ԾՐԱԳԻՐ

Արդյունքների ամփոփում. լավագույն մասնագիտական կարողություն ցուցաբերած, ինչպես նաև միջազգային, հանարպետական, մարզային, քաղաքային մրցույթներում և փառատոններում հաջողություններ ձեռք բերած սաներին պատվոգրերի հանձնում: Հարցախույզ թերթիկների և արձագանքների հիման վրա վերլուծության իրականացում: Տեսանյութի և տեղեկատուի պատրաստում, հաշվետվության կազմում:

Հ/Հ	Գործողությունների ծրագրերը	Գործողությունների ժամանակացույցը
1.	Նախապատրաստական աշխատանքներ՝ անհրաժեշտ նյութերի և պարագաների, պայմանավորվածությունների ձեռքբերում	մայիս-օգոստոս
2.	Ընթացակարգի և ժամանակացույցի կազմում	մայիս
3.	Բաց դասեր, սեմինարներ՝ ժողովրդական արվեստի, արհեստների, էկոլոգիայի, առողջ ապրելակերպի վերաբերյալ	հունիս
4.	Այցելություններ թանգարաններ և տեխնոլոգիական կենտրոններ	հունիս
5.	Հանդիպումներ Գյումրու քաղաքի հայտնի վարպետների ու արվեստագետների հետ	
6.	Գյումրի քաղաքի պատմամշակութային կոթողների մաքրման աշխատանքներ /Սուրբ Հակոբ Մծբնեցի եկեղեցի, Խաչքարերի պուրակ/	հունիս
7.	Գյումրու կոլորիտին բնորոշ աշխատանքների պատրաստում	մայիս-օգոստոս
8.	Սպորտային մրցույթներ	հունիս
9.	Գյումրու օրվան նվիրված քաղաքային միջոցառման մասնակցություն՝ ցուցահանդես, գեղարվեստական և ցուցադրական ելույթներ, ֆլեշմոբեր	օգոստոս
10.	Ծրագրի ամփոփում՝ պատվոգրերի հանձնում: Արդյունքների վերլուծում:	օգոստոս
11.	Տեսանյութի, տեղեկատուի և հաշվետվության պատրաստում	սեպտեմբեր

Գործողությունների ծրագրերը, գործողությունների ժամանակացույցը

Ազդեցությունը և շարունակականությունը

Միջոցառումներում ներգրավվածները կկարևորեն արտադարձացական կրթության դերը դեռահասների նպատակային զբաղվածության ապահովման, ազգային արհեստի ու արվեստի տարածման ու պահպանման, մասնագիտական կողմնորոշման գործում: Կենտրոնի սաները հնարավորություն կունենան իրենց մասնագիտական գիտելիքներն ու փորձը փոխանցել հասակակիցներին, կամավորական սկզբունքով կներգրավեն իրենց հասակակիցներին և արցախից տեղահանված և մարզում ապաստանած դեռահասներին արտադարձացական կրթության գործընթացին:

Բաց դասերի, սեմինարների, հանդիպումների, այցելությունների միջոցով կձևավորվի և կընդլայնվի մասնակիցների աշխարհայացքը, արժեհամակարգը, հոգատար ու սրտացավ վերաբերմունքը ազգային արժեքների նկատմամբ:

Քաղաքային միջոցառման ընթացքում սաների ձեռքով պատրաստած աշխատանքների միջոցով ազգաբնակչությունը և զբոսաշրջիկները կձանոթանան կենտրոնի գործունեությանը, հայկական արհեստներին և արվեստներին, որը կխթանի զբոսաշրջության զարգացմանը: Քաղաքային միջոցառումներին մասնակցությունը կնպաստի համագործակցության ընդլայնմանը, աշխատանքային նոր փոխհարաբերությունների հաստատմանը, արվեստի բնագավառում մեծ վաստակ ունեցող անձանց հետ ծանոթացմանը:

Ազդեցության շարունակականությունը և կայունության ապահովումը երկարաժամկետ հեռանկարում պայմանավորված է մշտապես համատեղ կրթամշակութային միջոցառումների կազմակերպմամբ, փորձի փոխանակմամբ: Կձևավորվեն արհեստը, արվեստը, շրջակա միջավայրը և պատմամշակութային կոթողները գնահատող, պահպանող դեռահասներ:

Տեսանելիությունը

Միջոցառումների տեսանելիությունը կապահովվի լուսաբանմամբ՝ կրթական կայքէջերում, «Կրթություն» շաբաթաթերթում, սոցիալական ցանցերում, ՀԼՄ-ների միջոցով: Ծրագրի վերաբերյալ կպատրաստվի տեղեկատվական տեսանյութ և տեղեկատու: Տեսանյութը կտեղադրվի նաև entanik.am, facebook սոցիալական կայքերում: Պարբերաբար կկազմակերպվի տեսանյութի դիտում և աշխատանքների ցուցադրում:

Համագործակցություն միջոցառման շրջանակներում

Միջոցառման շրջանակներում համագործակցող կազմակերպություններն են Գյումրու քաղաքապետարանը, ՀԱԵ Շիրակի թեմը, համատիրությունները, ծնողներ, ազգաբնակչություն, արվեստագետներ, վարպետներ, Գյումրու թանգարաններ, ՏՏ կենտրոններ:

Համագործակցող կազմակերպությունները կապահովեն մասնակիցների իրազեկումը, կտրամադրեն համապատասխան տարածքներ: Առկա են համագործակցության հուշագրեր, նախնական պայմանավորվածություն:

Միջոցառման մասնակիցները

- *Միջոցառման մասնակիցների ընդհանուր քանակը՝ շուրջ 1100*
«Ընտանիք» կենտրոն՝ 800 /ներառյալ արցախցիներ/, նախատեսվող 8 համայնքներից և Գյումրու հանրակրթական դպրոցներից՝ 300
- *Միջոցառման մասնակիցների նկարագրությունը և ընտրության կարգը՝*
«Ընտանիք» կենտրոն հաճախող մասնագիտական կարողություններ և հմտություններ ունեցող դեռահասներ, մանկավարժներ, հետաքրքրվողներ, կամավորներ:

Պատասխանատուներ՝



Ա. Պետրոսյան
Ա. Գրիգորյան
Ա. Մանուկյան

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հաստատում եմ
 Տնօրեն  Ա. Մինայան
 « 14 » հունիսի 2021թ.



ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ «Կոլորիտային քաղաքի գունապատկերը» խորագրով միջոցառումների շարք

Հունիս-հոկտեմբեր 2021թ


Հ/հ	Իրականացվող գործողություն	Կատարման օր, ամիս	Անցկացման /գործողության/ վայր	Թեմա	Պատասխանատուներ	Մասնակիցներ
Նախապատրաստական աշխատանքներ						
1.	Համագործակցող կառույցների հետ պայմանավորվածության ձեռքբերում	Հունիս-հոկտեմբեր	«Ընտանիք» կենտրոն		Տնօրենի տեղակալներ	
	Մասնակիցների անվանացանկի կազմում, սեմինարավարի ընտրություն				Տնօրենի տեղակալներ	
2.	Ծրագրի համար անհրաժեշտ նյութերի և պարագաների ձեռքբերում				Գնումների համակարգող	
1-ին փուլ						
3.	Բաց դասեր, գործնական պարապմունքներ մասնագիտական խմբակներում	Հունիս 7-12	«Ընտանիք» կենտրոն		Տնօրենի տեղակալներ	«Ընտանիք» կենտրոնի մանկավարժներ, սաներ, արցախցի՝ «Շտաբըրրասերներ»-ի խումբ

4.	Հանդիպումներ Գյումրի քաղաքի հայտնի վարպետների ու արվեստագետների հետ	Հուլիս 7,9,19	«Ընտանիք» կենտրոն		Տնօրենի տեղակալներ, գեղ. մասի վարիչ	«Ընտանիք» կենտրոնի մանկավարժներ, սաներ, արվեստագետներ
5.	Սեմինարներ	Օգոստոս 14, 28	«Ընտանիք» կենտրոն	«Արհեստ և արվեստ»	Սեմինարավար	«Ընտանիք» կենտրոնի մանկավարժներ, սաներ
6.	Ճանաչողական այցել	Սեպտեմբեր 7-9	Ասլամազյան քույրերի պատկերասրահ, Մինաս Ավետիսյանի տուն թանգարան, Ժողովրդական ճարտարապետության, քաղաքային կենցաղի և ազգային ճարտարապետության թանգարան		Տնօրենի տեղակալներ, գեղ. մասի վարիչ	«Ընտանիք» կենտրոնի մանկավարժներ, սաներ
2-րդ փուլ						
7.	Գյումրու պատմամշակութային վայրերի մաքրման աշխատանքներ	Սեպտեմբեր 15	Սուրբ Հակոբ Մծրնեցի եկեղեցի, հապքարերի պուրակ		Տնօրենի տեղակալներ, գեղ. մասի վարիչ	«Ընտանիք» կենտրոնի մանկավարժներ, սաներ
8.	Սպորտային մրցույթ	Սեպտեմբեր 23	«Ընտանիք» կենտրոն		Տնօրենի տեղակալ, գեղ.մասի վարիչ, կիր. աշխ. խմբ. համակ.	«Ընտանիք» կենտրոնի մանկավարժների, սաներ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

3-րդ փուլ

9.	Ցուցահանդես, գեղարվեստական և ցուցադրական ելույթներ, ֆլեշմոբ, շախմատային սեանսներ	Հոկտեմբեր 1	Գյումրու Սբ Հակոբ Մծբնեցի եկեղեցի	Տնօրենի տեղակալ, գեղ. մասի վարիչ, կիր. աշխ. խմ. համակ.	«Ընտանիք» կենտրոնի սաներ, մանկավարժներ
10.	Ծրագրի ամփոփում, պատվոգրերի հանձնում	Հոկտեմբեր 4		Տնօրեն	Ընտանիք» կենտրոնի մանկավարժներ, սաներ, ծնողներ, արվեստագետներ
11.	Ծրագրի վերաբերյալ տեղեկատուի, տեսանյութի, հաշվետվության պատրաստում	Հոկտեմբերի վերջ		Տնօրենի տեղակալներ, տեխնիկ	

Տնօրենի ուսումնադաստիարակչական և վարչատնտեսական աշխատանքների գծով տեղակալ՝  Ս. Պետրոսյան

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳՅՈՒՄՐԵՑԻ ԱՐԿԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ ԱՐՉԵՍՏԱԿՈՐՆԵՐԻ ՀԵՏ



ՄԵՄԻՆԱՐՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՋԵՄՏԻ, ԱՐԿԵՄՏԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ



ՄԵՄԻՆԱՐՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՅԵՍՏԻ,
ԱՐԿԵՍՏԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ



ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՄՐՈՒ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ



ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ



ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ



ԱՉԳԱՅԻՆ ԱՐՅԵՍՏԻ ԵՎ ԱՐԿԵՍՏԻ ՃՅՈՒՂԵՐԻՆ ԿԵՐԱԲԵՐՈՂ ԲԱՑ ԴԱՍԵՐ

ԱՐՇԱԹԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ



ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ



ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ



ԱԶԳԱՅԻՆ ԱՐՅԵՍՏԻ ԵՎ ԱՐԿԵՍՏԻ ՃՅՈՒՂԵՐԻՆ ԿԵՐԱԲԵՐՈՂ ԲԱՑ ԴԱՍԵՐ

ԽԵՑԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ



ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ



ՓԱՅՏԱՐԿԵՍ



ՊԱՏՄԱԿԱՆ ԿՈԹՈՂՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ




«ԱՐՅԵՍՏԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՔԱՂԱՔ
ԳՅՈՒՄՐԻ» ԳՅՈՒՄՐՈՒ ՕՐԿԱՆ ՆԿԻՐԿԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԽՄԲԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ



ԳՅՈՒՄՐՈՒ ՕՐԿԱՆ ՆԿԻՐԿԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ.
«ԱՐՅԵՍՏԻ ԵՎ ԱՐԿԵՍՏԻ ԶԱՂԱՔ ԳՅՈՒՄՐԻ»

ՆԿԱՐՉԱԿԱՆ ՖԼԵՇՄՈՐ



ԳՅՈՒՄՐՈՒ ՕՐԿԱՆ ՆԿԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ.
«ԱՐՅԵՍՏԻ ԵՎ ԱՐԿԵՍՏԻ ԶԱՂԱՔ ԳՅՈՒՄՐԻ»

ՆԿԱՐՉԱԿԱՆ ՖԼԵՇՄՈՐ



ԳՅՈՒՄՐՈՒ ՕՐԿԱՆ ՆԿԻՐԿԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ.
«ԱՐՅԵՍՏԻ ԵՎ ԱՐԿԵՍՏԻ ՔԱՂԱՔ ԳՅՈՒՄՐԻ»

ՆԿԱՐՉԱԿԱՆ ՖԼԵՇՄՈՐ



ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ



ՀՀ ԿԳՄՍՆ Ընտանիք ՄԴՍ կենտրոն

Кем опубликовано: Annman Minasyan · Только что



«Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի կողմից իրականացվող «Կուլորիտային քաղաքի գունապատկերը» ծրագրի շրջանակում սաները մասնակցեցին Գյումրու օրվան նվիրված քաղաքային միջոցառումներին:

Գյումրու Սուրբ Հակոբ Մծբնեցի եկեղեցու տարածքում տեղի ունեցավ կենտրոնի կիրառական արվեստի, արհեստի խմբակների սաների ձեռքի աշխատանքների ցուցադրություն և ՕԻՄ ԳյումրիՍ մոտիվներով նկարչական ֆլեշմոբ, որի նպատակն էր համատեղ կատարած աշխատանքները հանրայնացնելն ու «Արհեստի և արվեստի քաղաք Գյումրի» կարգախոսը վերահաստատելը:

Տարածքում հետաքրքրված մարդիկ հնարավորություն ունեցան հետևելու նաև գեղարվեստական, մարտական, վարսավիրական արվեստների և հագուստի մոդելավորման խմբակների ցուցադրական ելույթներին: Բնակչության համար կազմակերպվեց շախմատային խաղի միաժամանակյա սեանսներ:

Միջոցառումների նպատակն էր նպաստել Գյումրու մշակութային կյանքի վերածննդին, կարևորել արտադպրոցական կրթությամբ զբաղվելու անհրաժեշտությունն արհեստների ու արվեստների տարածման, պահպանման գործում:

Հետաքրքիր ու բովանդակալից օրը հնարավորություն ստեղծեց դեռահասների մոտ զարգացնել մասնագիտական կարողություններ ու հմտություններ, ստեղծագործական աշխատանքների միջոցով ներկայացնել Գյումրվա ինքնատիպ կուլորիտը:



ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ



ՀՀ ԿԳՄՍՆ Ընտանիք ՄՊՍ կենտրոն

Кем опубликовано: Anntan Minasyan · 10 сентября, 14:10 ·



«Կոլորիտային քաղաքի գունապատկերը» ծրագրի շրջանակում «Ընտա» Կոլորիտային քաղաքի գունապատկերը» ծրագրի շրջանակում «Ընտանիք» կենտրոնի սաների հերթական այցը Շիրակի մարզի Ջաջուռ գյուղում գտնվող Մինաս Ավետիսյանի տուն-թանգարանում էր: Մասնակիցները ծանոթացան մեծանուն նկարչի ինքնատիպ և գունազեղ մշակութային ժառանգությանը և հարստացած մինասյան տաք գույներով վերադարձան կենտրոն՝ իրենց հույզերն ու զգացողությունները կտավին հանձնելու խանդավառ ոգևորությամբ: Նիք» կենտրոնի սաների հերթական այցը Շիրակի մարզի Ջաջուռ գյուղում գտնվող Մինաս Ավետիսյանի տուն-թանգարանում էր: Մասնակիցները ծանոթացան մեծանուն նկարչի ինքնատիպ և գունազեղ մշակութային ժառանգությանը և հարստացած մինասյան տաք գույներով վերադարձան կենտրոն՝ իրենց հույզերն ու զգացողությունները կտավին հանձնելու խանդավառ ոգևորությամբ:



ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

«Կոլորիտային քաղաքի գունապատկերը» Հարցաթերթ

Ինչ տվեց Ձեզ «Կոլորիտային քաղաքի գունապատկերը» ծրագիրը:

Ծրագիրը ինձ հնարավորություն տվեց արվեստագետներ այցելելու՝
ուսումնասիրել ու եամանել Ձեր կարասիքը: Չգիտեի ինչպես:
Մեզ սովորեցրեցի պատկերներ նկարել ու գույները կիրառել ընդամենը
շնորհիվ Ձեր ասելիքի պեղ կապակցել: Մոլորակները, եւ
շատ հետաքրքիր էր: Կոլորեմանքը ամեն քաղաքում ունենալ
անհրաժեշտ էրագիր:

Ինչ սովորեցիք ծրագրի ընթացքում:

Սովորեցիք սիրել Ձեր գույնը: Եւ ինչ արեցիք ու բնակեցրեցի:
Սովորեցիք նաև, որ կարևոր է սխալում + կարասիք
բացատրել: Իր Եւրոպա ու իմանում եւ՝ արվեստ շատ է
սիրում կարեւոր: Եւրոպայում կը «հնարավոր» կենդանի էր
այս Երագիրը իրականացնելու համար

Անուն հայկ ազգանուն Մարգարե Խումբ Տան, անվարձաբջուլ

Հաստատում եմ՝
Տնօրեն՝  Ա. Մինայան
« 28 » հոկտեմբերի 2021թ.
Հաշվետվություն



«Կոլորիտային քաղաքի գունապատկերը» խորագրով միջոցառումների շարքի

Միջոցառման համառոտ նկարագրությունը

1-ին փուլ՝ Միջոցառմանը նախապատրաստվելու համար կենտրոնի ղեկավարով կիրառական արվեստի և ռադիոէլեկտրոնիկայի խմբակների սաներին տրվեց առաջադրանք Գյումրի քաղաքին ու կոլորիտին բնորոշ էսքիզների հիման վրա կատարել ստեղծագործական աշխատանքներ: Գեղարվեստական խմբակների ղեռահասներին ուսուցանվեց թեմային համահունչ նյութեր: «Ընտանիք» կենտրոնում անցկացվեցին բաց դասեր և գործնական պարապմունքներ Շիրակի մարզի Մայիսյանի, Թորոսպուղի միջնակարգ և Գյումրու թիվ 11, 29 հիմնական դպրոցների աշակերտների և արցախցի ղեռահասների համար: Կազմակերպվեց Գյումրու հայտնի վարպետների ու արվեստագետների հետ հանդիպումներ, այցելություն Մինաս Ավետիսյանի տուն-թանգարան, Ասլամազյան քույրեր պատկերասրահ, Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան: «Ընտանիք» կենտրոնում անցկացվեցին սեմինարներ՝ ազգային արհեստի և արվեստների, էկոլոգիայի, առողջ ապրելակերպի վերաբերյալ:

2-րդ փուլ՝ Կազմակերպվեց Սուրբ Հակոբ Մծրնեցի եկեղեցու և Խաչքարերի պուրակի մաքրման աշխատանքներ:

3-րդ փուլ. «Ընտանիք» կենտրոնում անցկացվեցին սպորտային մրցույթներ, շախմատային խաղի միաժամանակյա սեանսներ, ցուցադրվեցին «Հին և նոր Գյումրի» խորագրով սահիկահանդեսներ և բեմականացումներ:

Սուրբ Հակոբ Մծրնեցի եկեղեցու բակում կազմակերպվեց ֆլեշմոբ, ցուցահանդես, գեղարվեստական ելույթներ:

Միջոցառումները լուսաբանվեցին entanik.am կայքէջում, facebook սոցիալական ցանցում: Ծրագրի վերաբերյալ պատրաստվեց տեսանյութ և տեղեկատու:

Ծրագրի նպատակներն ու խնդիրները

- Ստեղծագործական աշխատանքների միջոցով ներկայացնել Գյումրվա ինքնատիպ կոլորիտը
- Նպաստել Գյումրու մշակութային կյանքի վերածննդին
- Բարձրացնել հետաքրքրությունը Գյումրուն բնորոշ արհեստի ու արվեստի ճյուղերի նկատմամբ և այն հանրայնացել
- Դեռահասների շրջանում ճանաչելի դարձնել գյումրեցի վարպետներին, պատմամշակութային արժեքների և առհասարակ շրջակա միջավայրի մաքրության, էկոլոգիայի պահպանումը դարձնել ամենօրյա գործելակերպ
- Կարևորել արտադպրոցական կրթությամբ զբաղվելու անհրաժեշտությունն արհեստների ու արվեստների տարածման, պահպանման գործում
- Դեռահասներին ուղղորդել և աջակցել մասնագիտական կողմնորոշման հարցում
- Կենտրոնի խմբերը համալրել «Հետաքրքրասերներ»-ի խմբերի բացահայտված շնորհալի սաներով
- Չարգացնել մասնագիտական կարողություններ ու հմտություններ

Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցներ/ թիվը

- «Ընտանիք» կենտրոնի սաներ, մանկավարժներ, ծնողներ՝ 1200
- Գյումրու թիվ 11, 29, հիմնական դպրոցների և Մայիսյանի, Թորոսպուղի միջնակարգ դպրոցների աշակերտներ՝ 150
- Ազգաբնակչություն

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Իրականացման վայրը

- «Ընտանիք» կենտրոն
- Սուրբ Հակոբ Մծբնեցի եկեղեցի
- Մինաս Ավետիսյանի տուն-թանգարան, Ասլամազյան քույրեր պատկերասրահ, Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան

Իրականացման ժամկետները

- Հունիս 7-12 / բաց դասեր, գործնական պարապմունքներ/
- Հուլիսի 7, 9, 19 /հանդիպումներ Գյումրի քաղաքի հայտնի վարպետների ու արվեստագետների հետ/
- Օգոստոսի 14, 28 /սեմինարներ/
- Սեպտեմբերի 7-9 /Այց Մինաս Ավետիսյանի տուն-թանգարան, Ասլամազյան քույրեր պատկերասրահ, Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան/
- Սեպտեմբերի 15 /Գյումրի քաղաքի պատմամշակութային կոթողների մաքրման աշխատանքներ/
- Սեպտեմբերի 23 /սպորտային մրցույթներ/:
- Հոկտեմբերի 1 /Ցուցահանդես, գեղարվեստական և ցուցադրական ելույթներ, ֆլեշմոբ, շախմատային սեանսներ/:
- Հոկտեմբերի 4 /Ծրագրի ամփոփում, լավագույն մասնագիտական կարողություն ցուցաբերած, ինչպես նաև միջազգային, հանրապետական, մարզային, քաղաքային մրցույթներում և փառատոններում հաջողություններ ձեռք բերած սաներին պատվոգրերի հանձնում/




Ֆինանսավորման աղբյուրը

- ՀՀ ԿԳՄՄՆ «Ընտանիք» ՄՊՍԿ

Ծրագրի արդյունքները

- Վերածնված քաղաքի մշակութային ժառանգությանը և «Ընտանիք» կենտրոնի գործունեությանը ծանոթացած դեռահասներ, բնակչություն
- Հայ վարպետների ժառանգությունը գնահատող և մեծարող դեռահասներ
- Գյումրիին բնորոշ արհեստն ու արվեստը արժևորող, պահպանող և ներկայացնող սերունդ
- Կենտրոնի շնորհիվ սաների ձեռքի աշխատանքների հանրայնացում
- Աշխատանքային փոխհարաբերությունների ամրապնդում և փորձի փոխանակում այլ կրթամշակութային հաստատությունների հետ
- Հանրօգուտ, կազմակերպչական և նախաձեռնողական աշխատանքներում ընդգրկված դեռահասներ

Պատասխանատուներ

 Ս. Պետրոսյան
 Ա. Գրիգորյան
 Ս. Մանուկյան

ՏԵՍԱԴԱՐԱՆ





ԿՈԼՈՐԻՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԻ
ԳՈՒՆԱՊԱՏՏԿԵՐԸ



2021